«Ա.Դ.ՍԱԽԱՐՈՎԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

2024թ.

Երևան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ 5
2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 5
3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԸ 6
4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 6
5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ 7
6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 7
6.1. Իրավապաշտպան գործունեություն (մարդու իրավունքների պաշտպանություն) 8
6.2. Մշտադիտարկում և շահերի պաշտպանություն 10
6.3. Քաղաքացիական հասարակության հզորացում 10
6.4. Հետազոտական-վերլուծական գործունեություն 11
6.5. Ռեսուրս կենտրոնի ծառայությունների մատուցում 12
6.6. Մամուլի տեսության վարում 12
6.7. Ենթադրամաշնորհների տրամադրում 12
6.8. Համագործակցություն և մասնակցություն 13
7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ 13
8. ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ 14
9. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ (ԴՈՆՈՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ 16
10. ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ 16
11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ 17
12. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 18
ՀԱՎԵԼՎԱԾ ..... **Error! Bookmark not defined.**

ՆԱԽԱԲԱՆ

Հարգելի՛ բարեկամներ և գործընկերներ

Սիրով ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության (այսուհետև՝ Կազմակերպություն) 2024 թ. գործունեության տարեկան զեկույցը (այսուհետև՝ զեկույց)։ Զեկույցում ամփոփված են Կազմակերպության առաքելությունը, գործունեության սկզբունքները, ծրագրերն ու նախաձեռնությունները, շահառուների շրջանակը, ֆինանսավորման աղբյուրները և դրանց օգտագործման նպատակային ուղղությունները և անհրաժեշտ այլ տեղեկություններ, որոնք կհետաքրքեն նաև մեր շահառուներին։

Կազմակերպությունը մշտապես գործում է իր կանոնադրական նպատակներին ու խնդիրներին համապատասխան՝ առաջնորդվելով օրինականության, խտրականության բացակայության, բարեխղճության, անդամակցության կամավորության, ինքնակառավարման, թափանցիկության և հաշվետվողականության սկզբունքներով։ Այդ նպատակով Կազմակերպությունը յուրաքանչյուր տարի «Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իր գործունեության և ֆինանսական աղբյուրների մասին հաշվետվություններ է ներկայացնում և՛ դոնոր կազմակերպություններին, և՛ ՀՀ-ի պետական եկամուտների կոմիտեին։ Այս հաշվետվությունները, որպես կանոն, հրապարակվում են Կազմակերպության պաշտոնական կայքում[1]։

Հաշվետու ժամանակահատվածում Կազմակերպությունը դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացրել է անհատական և խմբային անվճար իրավաբանական խորհրդատվություններ՝ առկա, առցանց և արտագնա ձևաչափերով։ Պատրաստվել և տարածվել են իրավական իրազեկման հուշաթերթեր, կատարվել են վերլուծություններ և կազմվել են իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ պետական և ՏԻՄ-երին։ Բացի դրանից՝ Կազմակերպությունը հանդես է եկել նաև մարդու իրավունքների խախտումներին արձագանքող գրություններով՝ ուղղված պետական կառավարման համապատասխան մարմիններին։ Կազմակերպությունն իր մասնաճյուղերի և կենտրոնական գրասենյակի հետ իրականացրել է նաև երկարաժամկետ և կարճաժամկետ մշտադիտարկումներ մարդու իրավունքների խնդրահարույց ոլորտենում՝ արդյունքները ներկայացնելով շահագրգիռ կողմերին։

2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմից (44-օրյա պատերազմ) հետո Կազմակերպության շահառուների ցանկում ընդգրկվել են նաև Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված մեր հայրենակիցները։ Նրանցից 348 անձանց տրամադրվել են իրավաբանական անվճար խորհրդատվություններ՝ իրենց իրավունքների ու հիմնարար ազատությունների, դրանց սահմանափակումների, ինչպես նաև խախտումների և բողոքարկման մեխանիզմների, վարչական մարմինների լիազորությունների շրջանակի վերաբերյալ։ Կազմակերպության իրավաբանական ծառայությունների աջակցությամբ 2024 թ. 140 շահառուներ կարողացել են վերականգնել իրենց իրավունքները։

Իրավապաշտպան գործունությունից բացի Կազմակերպությանում իրենց կարևոր տեղն են զբաղեցնում Կազմակերպության ստեղծած *Քաղաքացիական հասարակության դպրոցը* (ՔՀԴ) և *Հետազոտական-վերլուծական կենտրոնները* (ՀՎԿ)։ Դրանց միջոցով նպաստում ենք ՀՀ համայնքների երիտասարդների և քաղաքացիական հասարակության կառույցների (ՔՀԿ-ների) ոչ ֆորմալ կրթությանն ու իրավագիտակից հասարակության ձևավորմանը։

Երիտասարդ հետազոտողներից ձևավորված *Հետազոտական-վերլուծական կենտրոնները* (ՀՎԿ) ծավալել են փորձագիտական և հետազոտական գործունեություն, որի արդյունքներով մշակվել են վերլուծական և հետազոտական 10 աշխատանքներ։ Մասնավորապես իրականացվել են հետևյալ

[1] Հաշվետվություններ, http://www.sakharovcenter.org/?page=reports&lng=am:

ուսումնասիրությունները՝ «Սևանա լճի ջրի մակարդակի փոփոխությունը վերջին հինգ տարիների ընթացքում», «Ուսուցիչների կամավոր ատեստավորում, 2023 թ.», «Հասարակագիտություն առարկայի 11-րդ դասարանի իրավագիտություն դասընթացի կարևորությունը, համապատասխանությունը տարիքային խմբին և մատչելիությունը 2023 թ», «2022 և 2023 թթ. ուսուցիչների կամավոր ատեստավորման համեմատական վերլուծությունը՝ աղյուսակների և հիստոգրամների միջոցով» (մշակվել է նաև «Ուսուցչի հուշարան» մեթոդական ձեռնարկը), «Գավառ համայնքի եկամտային ներուժի վերլուծություն և գնահատում (2017–2023 թթ.)», «Գավառ համայնքի ֆոնդային բյուջեի ծախսային ուղղությունների վերլուծություն (2017–2023 թթ.)», «Արցախից բռնի տեղահանված 18–35 տարեկան արցախցիների ներգրավվածության մակարդակը համայնքում 2023–2024 թթ.», «Երիտասարդների հիմնախնդիրները Գորիս համայնքում», «Արհեստական բանականության օգտագործման իրավական և բարոյական սահմանները՝ բուհական միջավայրում», «Ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի նշանակությունը՝ կազմակերպության արդյունավետ կառավարման մեջ»: Վերլուծությունները ներկայացվել են ՏԻՄ-երին, պետական և հասարակական կառույցներին քաղաքականության մշակման գործընթացում կիրառման նպատակով:

ՔՀԴ մասնակից ակտիվ երիտասարներն իրենց համայնքներում դարձել են ոչ ֆորմալ առաջնորդներ և համախմբողներ: ՔՀԴ-ի արդյունավետության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ դասընթացներին մասնակցած անձանց կողմից Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում ստեղծվել են 13 նախաձեռնող խմբեր, գրանցվել են 10 ՔՀԿ-ներ:

Հարգելի՛ ընթերցող, հուսով ենք, որ սույն զեկույցում կգտնեք Կազմակերպության գործունեության վերաբերյալ Ձեզ հետաքրքրող անհրաժեշտ բոլոր տեղեկությունները: Այնուամենայնիվ, եթե կունենաք լրացուցիչ հարցեր, որոնց պատասխանները չեք գտնի այստեղ, կամ դիտարկումներ, կարող եք կապ հաստատել մեզ հետ՝ գրելով հետադարձ նամակ: Մեր թիմը սիրով կպատասխանի ձեր հարցերին:

Հարգանքով՝

Մերի Խաչատրյան

«Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների

պաշտպանության հայկական կենտրոն»

հասարակական կազմակերպության տնօրեն

1. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Կազմակերպությանն անկախ հասարակական միավորում է, ունի ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ: Կազմակերպությունը, որը հանդիսանում է «Ա.Դ. Սախարովի անվան առաջընթացի, մարդու իրավունքների պաշտպանության և գթասրտության հայկական ֆոնդի» իրավահաջորդը, հիմնադրվել է 1990 թ. հոկտեմբերի 9-ին Հայկական ԽՍՀ մինիստրների խորհրդի թիվ 457 որոշման հիման վրա: 1997 թ. դեկտեմբերի 26-ից Կազմակերպությունը ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցված է որպես հասարակական կազմակերպություն (գրանցման վկայական՝ N 414):

Կազմակերպությունը վերագրանցվել է 2000 թվականի հունվարի 21-ին, իսկ նոր խմբագրությամբ կանոնադրությունը գրանցվել է 2006 թվականի հուլիսի 14-ին (գրանցման համար՝ 211.171.04085): Կազմակերպության արտահերթ ժողովի որոշման հիման վրա Կազմակերպությունը փոփոխություններով ու լրացումներով (նոր խմբագրությամբ) կանոնադրությամբ պետական գրանցում է ստացել 2017 թվականի դեկտեմբերի 8-ին:

Կազմակերպությունը գործում է ՀՀ-ում, ունի երեք մասնաճյուղ՝ Շիրակի (1996 թ.), Գեղարքունիքի (1997 թ.) և Սյունիքի (1997 թ.) մարզերում՝ համապատասխանաբար Գյումրի, Գավառ և Գորիս քաղաքներում:

Կազմակերպությունն իր գործունեության աշխարհագրությունը չի սահմանափակում միայն այս երեք մարզերով. իրավապաշտպան գործունեությունն իրականացնելիս կամ իրավաբանական անվճար օգնություն ցուցաբերելիս (այսինքն՝ իրավաբանական ծառայությունների հասանելիության տեսանկյունից) շահառուների բնակության վայրը կարևոր դեր չի խաղում

Կազմակերպությունն ինքնուրույն է որոշում իր կազմակերպական կառուցվածքը, գործունեության առարկան, նպատակներն ու ձևերը: Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրության, օրենքների, նորմատիվ իրավական այլ ակտերի, ՀՀ-ի միջազգային պայմանագրերի և իր կանոնադրության հիման վրա:

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Կազմակերպության կառավարման մարմիններն են բարձրագույն մարմինը՝ *Ժողովը*, գործադիր մարմինը՝ *տնօրենը*, և Կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմինը՝ *Խորհուրդը*: Կազմակերպության գործադիր և կոլեգիալ մարմիններն ընտրովի են: Կազմակերպության հերթական ժողովները գումարվում են հինգ տարին մեկ անգամ, սակայն Ժողովն իրավունք ունի կազմակերպել նաև արտահերթ ժողովներ՝ ըստ անհրաժեշտության և հարցերի հրատապության:

Կազմակերպության բարձրագույն կառավարման մարմինը նրա անդամների *Ժողովն* է, որի իրավասության կարևորագույն հարցերից են Կազմակերպության կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և/կամ լրացումների կատարումը կամ նոր խմբագրությամբ կանոնադրությունը հաստատելու մասին որոշումների ընդունումը, իրավաբանական այլ անձի ստեղծման կամ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու և կարևորագույն այլ հարցերի շուրջ որոշումների ընդունումը:

Կազմակերպության գործադիր մարմինը *տնօրենն* է, որի իրավասությունները ներառում են Կազմակերպության ընթացիկ գործունեության կառավարման, ինչպես նաև Կազմակերպության կառավարման մարմինների գործունեությունն ապահովելուն ուղղված բոլոր հարցերը: Տնօրենը իր լիազորություններն իրականացնելիս Կազմակերպության անունից գործում է առանց լիազորագրի:

Կոլեգիալ կառավարման մարմինը *Խորհուրդն* է, որը քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ, բացառությամբ կանոնադրությամբ Կազմակերպության *Ժողովին* ու տնօրենին վերապահված իրավասությունների: *Խորհուրդը* կարող է իրականացնել նաև *Ժողովի* որոշումներով նախատեսված այլ լիազորություններ:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Առաքելությունը

Կազմակերպության առաքելությունը ՀՀ-ում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն ու ժողովրդավարական համակարգի զարգացման խթանումն է:

Սկզբունքները

Կազմակերպության գործունեության սկզբունքներն են օրինականությունը, խտրականության բացառումը, բարեխղճությունը, անդամության կամավորությունը, անդամների շահերի ընդհանրությունը, ինքնակառավարումը, հաշվետվողականությունը:

Արժեքները

Կազմակերպության արժեքները կարելի է դիտարկել երկու տեսանկյունից՝

- ներքին արժեքներ, որոնք ուժեղացնում են հասարակական Կազմակերպության ներուժը իր կանոնադրական նպատակներն արդյունավետ իրականացնելու համար,
- արտաքին արժեքներ, որոնք նպաստում են ՀՀ հասարակական կյանքի ժողովրդավարացմանը և իրավունքների գերակայությանը:

Ներքին արժեքներն են՝

- կազմակերպության ապաքաղաքական բնույթը,
- աշխատողների պրոֆեսիոնալիզմի շարունակական կատարելագործումը,
- կարգապահության և պատասխանատվության բարձր մակարդակը,
- Հայաստանում ծագող մարտահրավերներին արագ արձագանքումը,
- անհանդուրժողական վերաբերմունքը՝ հանրային կյանքում ցանկացած խտրականության նկատմամբ:

Արտաքին արժեքներն են՝

- մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության միջազգային նորմերի գերակայությունը,
- ՀՀ սահմանադրության և ազգային օրենսդրության գերակայությունը,
- օրենքի առջև ֆիզիկական և իրավաբանական անձանց հավասարությունը,
- անկախությունը՝ արտաքին և ներքին ազդեցություններից:

Կազմակերպությանն անկախ է քաղաքական և այլ ազդեցություններից, իր գործունեության մեջ անաչառ է և պատասխանատու է կատարած աշխատանքի արդյունքների համար:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Գործունեության նպատակները

- Նպաստել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

- Նպաստել քաղաքացիական հասարակության կառույցների կարողությունների հզորացմանը:
- Նպաստել որոշումների ընդունման և հանրային կառավարման վերահսկողության գործընթացներին հասարակության մասնակցության ապահովմանը:
- Նպաստել բնակչության իրավագիտակցության, իրավական մշակույթի և ընկալման մակարդակի բարձրացմանը:
- Մատուցել իրավաբանական անվճար ծառայություններ:
- Աջակցել հանրապետությունում արդար ու թափանցիկ ընտրությունների անցկացմանը և ընտրական ինստիտուտի կայացմանը, այդ նպատակով իրականացնել ընտրությունների և հանրաքվեների նկատմամբ հասարակական վերահսկողություն, այդ թվում՝ դիտորդական առաքելություն:
- Անցկացնել պետական և ՏԻՄ-երի գործունեության և նրանց կողմից իրականացվող ծրագրերի, ինչպես նաև հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթամշակութային և բնապահպանական ոլորտների ուսումնասիրություններ, մշտադիտարկում ու գնահատում:
- Մասնակցել ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքների և իրավական այլ ակտերի ստեղծման աշխատանքներին և հանրային քննարկումներին:
- Իրականացնել Կազմակերպության նպատակներին համապատասխան և ՀՀ-ի օրենսդրությամբ չարգելված այլ գործունեություն:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

- Բնակչության սոցիալապես անապահով քաղաքացիները
- Կենսաթոշակառուները
- Հաշմանդամություն ունեցող անձինք
- Փախստականները, փախստականի կարգավիճակ և ժամանակավոր ապաստան հայցող անձինք
- Օտարերկրյա պետությունների քաղաքացիները
- Գաղթյալներն ու ներքին տեղահանվածները
- Բնական և մարդածին աղետների գոտիների բնակիչները
- Զինծառայողներն ու նրանց ընտանիքի անդամները
- Սահմանափակ գործունակ և անգործունակ ճանաչված անձինք
- Թրաֆիքինգի և բռնության ենթարկված անձինք
- Երեխաները, երիտասարդները
- Հասարակական միավորումների ու հիմնադրամների անդամներն ու շահառուները
- Անհատ ձեռնարկատերերն ու իրավաբանական անձինք
- Քաղաքացիական նախաձեռնող խմբերը
- Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և Հայաստանում ժամանակավորապես կամ մշտապես բնակություն հաստատած անձինք

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Իրավապաշտպան գործունեություն (մարդու իրավունքների պաշտպանություն)

2024 թվականին Կազմակերպության կենտրոնական գրասենյակի և մասնաճյուղերի իրավաբաններն անվճար իրավաբանական անհատական, խմբային, առկա և առցանց խորհրդատվություն են տրամադրել 3587 անձի, որից 1008-ը՝ տղամարդ, 2579-ը՝ կին, այդ թվում՝

Իրավաբանական խորհրդատվություն			
Կազմակերպության գրասենյակը	Ընդ.	Տղամարդ	Կին
Երևան (կենտրոնական)	1247	409	838
Շիրակ	1268	390	878
Գեղարքունիք	497	138	359
Սյունիք	575	71	504
Ընդամենը	3587	1008	2579

Կազմակերպության իրավաբանների կողմից 91 անգամ իրականացված խմբային խորհրդատվական հանդիպումներին մասնակցել է 556 մարդ։

Իրավաբանների կողմից իրականացված խմբային խորհրդատվություններ		
Կազմակերպության գրասենյակը	Անգամ	Մասնակից
Երևան (կենտրոնական)	4	17
Շիրակ	69	253
Գեղարքունիք	10	130
Սյունիք	8	156
Ընդամենը	91	556

Հաշվետու ժամանակահատվածում դրամաշնորհային ծրագրերով նախատեսված «Մարդու իրավունքների պաշտպանություն» բաղադրիչով 26 անգամ խորհրդատվական հանդիպումներ են իրականացրել նաև Կազմակերպության մասնաճյուղերի ղեկավարները և ծրագրերում ներգրավված փորձագետները։ Այս հանդիպումներին մասնակցել է 266 մարդ։

Կազմակերպության ներկայացուցիչների և ներգրավված փորձագետների կողմից իրականացված խմբային խորհրդատվություններ		
Կազմակերպության գրասենյակը	Անգամ	Մասնակից
Շիրակ	15	110
Գեղարքունիք	3	60
Սյունիք	8	96

Ընդամենը	26	266

Մշակվել և տարածվել են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող, ինչպես նաև տեղեկատվական բնույթի 123 հուշաթերթեր։

Հուշաթերթեր	
Կազմակերպության գրասենյակը	Քանակը
Երևան (կենտրոնական)	29
Շիրակ	34
Գեղարքունիք	28
Սյունիք	32
Ընդամենը	123

Տեղական, տարածքային և կենտրոնական կառավարման մարմիններին ուղարկվել են 224 գրություն, հարցում, դիմում հասարակական շահերի և քաղաքացիների իրավունքների արտադատարանական պաշտպանության նպատակով։

Գրություններ, դիմումներ և հարցումներ	
Կազմակերպության գրասենյակը	Քանակը
Երևան (կենտրոնական)	89
Շիրակ	60
Գեղարքունիք	33
Սյունիք	6
Ընդամենը	188

Կազմակերպության իրավաբանական ծառայության աջակցությամբ 2024 թ. կազմվել և պետական գրանցման են ներկայացվել իրավաբանական 10 անձանց՝ նոր հիմնադրվող հասարակական կազմակերպությունների կանոնադրություններ և հիմնադիր փաստաթղթեր: Նույն տարում կազմակերպությունը հանդես է եկել նաև որպես դատական ներկայացուցիչ՝ դատարանում ներկայացնելով 1 շահառուի շահերը։

Կազմակերպության գրասենյակը	Իրավաբանական անձանց կանոնադրություններ և հիմնադիր փաստաթղթերի կազմում	Ներկայացուցչություն դատարանում	Հայցադիմումների, դիմումների, միջնորդությունների և բողոքների ներկայացում
Երևան	0	0	19
Շիրակ	9	1	16
Գեղարքունիք	0	0	13
Սյունիք	1	0	0
Ընդամենը	10	1	48

6.2. Մշտադիտարկում և շահերի պաշտպանություն

Շահերի պաշտպանության համատեքստում 2024 թվականին իրականացվել է կարճաժամկետ և երկարաժամկետ 12 մոնիտորինգ:

2024 թվականին պատրաստվել են շահառուների գործերի, երևույթների, գործող իրավակարգավորումների մասին 60 վերլուծություններ և 26 օրենքների և իրավական այլ ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ, որոնք ներկայացվել են շահագրգիռ կողմերին:

Կազմակերպության գրասենյակը	Իրավական վերլուծությունների քանակը	Օրենսդրական առաջարկությունների քանակ
Երևան (կենտրոնական)	11	15
Շիրակ	21	6
Գեղարքունիք	13	2
Սյունիք	15	3
Ընդամենը	60	26

6.3. Քաղաքացիական հասարակության հզորացում

Քաղաքացիական հասարակության հզորացման նպատակով 2004 թվականից Գյումրի, Գավառ, Գորիս քաղաքներում գործում են ՔՀԴ-ներ, որոնք ստեղծվել են Կազմակերպության նախաձեռնությամբ: ՔՀԴ-ների հիմնական հոսքերն են «Կառավարման դասընթաց՝ ՔՀԿ-ների համար»-ը, «Խորացված դասընթաց՝ ՔՀԿ-ների համար»-ը, «Ուսուցանողների ուսուցումը», «Մեդիագրագիտության և քննադատական մտածողության դասընթացը»: Թիրախ տարբեր խմբերի համար իրականացվում են նաև նախասիրական տարաբնույթ դասընթացներ:

Ընդհանուր առմամբ՝ 2024 թ. Կազմակերպության բոլոր ուսուցումներին և տարաբնույթ դասընթացներին մասնակցել են 1016 ունկնդիրներ.

Կազմակերպության գրասենյակը	Ունկնդիրների քանակը
Շիրակ	477
Գեղարքունիք	224

Սյունիք	315
Ընդամենը	1016

6.4. Հետազոտական-վերլուծական գործունեություն

Կազմակերպության Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մասնաճյուղերում իրականացված հետազոտական և վերլուծական աշխատանքները միտված են եղել ձևավորելու քաղաքականությունների մշակման, վերլուծության և զարգացման հեռանկարների մոդելավորման վրա հիմնված մասնագիտացված կենտրոն՝ think-tank-ի սկզբունքով:

Գործունեության հիմնական արդյունքները

- ՀՀ տարածաշրջաններում ՔՀԿ-ների և համայնքահեն կառույցների ու հիմնադրամների ընդհանուր կայունության բարձրացում:
- Քաղաքացիական ակտիվության զարգացում:
- Փորձառու, մասնագիտացված և համայնքահեն ՔՀԿ-ների միջև համագործակցության ուղիների զարգացում:
- Քաղաքացիական հասարակությանը գիտելիքի, փորձի և ներուժի փոխանցում:
- Փորձագիտական խորհուրդների գործունեության կազմակերպում մասնաճյուղերում:
- Փորձագիտական և հետազոտական գործունեության իրականացում:
- Ակտիվ երիտասարդների կողմից իրականացված հետազոտություններ, կազմված զեկույցներ:
- Էլեկտրոնային մամուլի, սոցիալական ցանցերի՝ ոլորտին վերաբերվող նյութերի տեսությունների կազմում և վերլուծություն:
- Քաղաքացիական հասարակության դպրոցի ուսումնական և թեմատիկ պլանների, ուսումնական մոդուլների մեթոդների և տեխնոլոգիաների մշակում:
- Աշխատանք՝ ՔՀԴ ունկնդիրների հետ, հետադարձ կապի ապահովում:
- Ուսումնական ձեռնարկների, ուղեցույցների, շտեմարանների կազմում:
- ՔՀԴ ունկնդիրների կողմից դասընթացների իրականացման կազմակերպում:
- «Հետազոտական հմտություններ և քննադատական մտածողություն» խորագրով 3-օրյա ուսումնագործնական ճամբար Ծաղկաձորում:

Հանրային հանդիպումներ

- «2023-ի գործունեությունն ու 2024-ի մարտահրավերները» փորձագիտական հանդիպում-քննարկում
- «ՔՀԿ չափիչ Հայաստան 2024» զեկույցի ներկայացում-քննարկում
- «Երեխայի լավագույն շահը» ֆորում
- Հեռուստաքննարկում «Միավորված համայնքների համաչափ զարգացում»
- «Հետազոտական և նախագծային ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը որպես սովորողների մտածողության զարգացման արդյունավետ գործիք» հանդիպում-քննարկում
- Համայնքների հետ համատեղ քննարկում 2024թ. մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ
- «Կրթության ոլորտի պատասխանատուների, մասնագետների և հասցեատերերի ակնկալիքները» թեմայով թաուն հոլի (համայնքային հանդիպում) իրականացում
- «Կամավոր աշխատանքի մասին ՀՀ օրենքի շուրջ քննարկում ՀԿ ներկայացուցիչների հետ

- «Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված 18-35 տարեկան արցախցիների ներգրավվածության մակարդակը համայնքում» թեմայով քննարկում համայնքներում
- «Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ կապված պետության կողմից տրամադրվող սոցիալական աջակցության ծրագրերի հասանելիության հետ» հանրային քննարկում Արցախից բռնի տեղահանված մեր հայրենակիցների հետ

Հեռուստահրապարակումներ

- «Քաղհասարակության դերը միավորված համայնքների զարգացման գործում», 07.03.2024թ., հեռուստահաղորդում, https://progressgyumri.am/news/17803:
- «Տարածքային կառավարման ոլորտում կառուցվածքային փոփոխությունների արդյունավետությունը», 13.03.2024թ., հեռուստահաղորդում, https://progressgyumri.am/news/17819:
- Հեռուստաքննարկում «Միավորված համայնքների համաչափ զարգացում» Գյումրի, 25.09.2024 թ., https://progressgyumri.am/news/19381:
- «Հետք» լրատվամիջոցի կողմից պատրաստել և հրապարակել է «Ինչպիսի՞ համայնքում եմ ուզում ապրել» վերնագրով հեռուստաքննարկումը՝ Գեղարքունիքի մասնաճյուղի ղեկավարի մասնակցությամբ ՀՀ-ում ՏԻՄ-երի կողմից մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման վերաբերյալ, https://www.hetq.am/hy/article/169703, https://www.youtube.com/watch?v=ksydQx-Wto0&t=1s:

6.5. Ռեսուրս կենտրոնի ծառայությունների մատուցում

Մասնաճյուղերում ձևավորված համայնքային ռեսուրս կենտրոնները ուսումնական, խորհրդատվական, հանրային իրազեկման և տեղեկատվության տարածման, տեխնիկական աջակցության ծառայություններ են մատուցել 306 կառույցների (ՔՀԿ, ՏԻՄ, մասնավոր)։

6.6. Մամուլի տեսության վարում

2024 թվականին Կազմակերպության երեք մասնաճյուղերի անձնակազմը կազմել է ամենամսյա մամուլի տեսություններ (ընդամենը՝ մամուլի 48 տեսություն)՝ քաղաքացիական հասարակության գործունեության, մարդու իրավունքների խախտումների, ինչպես նաև ՀՀ-ի քաղաքական, սոցիալ-տնտեսական դրության վերաբերյալ։ Որպես կանոն և ընդունված պրակտիկա՝ մամուլի տեսության վարումը Կազմակերպության համար հիմք է հանդիսանում իրավական վերլուծությունների, մշտադիտարկումների, ինչպես նաև համապատասխան հարցումներով և առաջարկություններով ՀՀ պետական կառավարման և/կամ ՏԻՄ-եր դիմելու համար։

6.7. Ենթադրամաշնորհների տրամադրում

Հաշվետու տարում Կազմակերպությանը դրամաշնորհային ծրագրի շրջանակում ՀՀ-ի Շիրակի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում գործող համայնքահեն քաղաքացիական հասարակության 8 կազմակերպությունների տրամադրել են փոքր ենթադրամաշնորհներ՝ կարճաժամկետ ծրագրեր իրականացնելու համար։ Արդյունքում՝

- հրապարակվել են էլեկտրոնային և տպագիր 8 հոդվածներ,
- անցկացվել են ֆոկուս-խմբային և կլոր սեղան 5 քննարկումներ,
- մշակվել և տարածվել են 400-ից ավելի հարցաթերթեր և իրականացվել են 380 հարցումներ,

- կազմակերպվել ու անցկացվել են 64-ժամյա սեմինար-դասընթացներ,
- կազմվել են աղետների ռիսկի դիմակայունության 6 զեկույց-ուղղեցույցներ,
- իրականացվել են առցանց 4 քննարկումներ,
- մատուցվել են ռեսուրս կենտրոնի ծառայություններ իրավաբանական 11 կառույցների և 180-ից ավելի անհատների,
- կազմվել են անհատական-փորձագիտական 3 հետազոտություններ,
- Ֆեյսբուքում հիմնվել է սոցիալական հարթակ ձեռներեց կանանց արտադրանքի գովազդման և վաճառքի համար,
- 100-ից ավելի առաջարկություններ են ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Սյունիքի մարզպետների աշխատակազմերին, համայնքապետարաններին, կրթական հաստատություններին, համագործակից ՔՀ կառույցներին, անհատ փորձագետներին:

Ընդհանուր առմամբ իրականացվել են 8 ենթադրամաշնորհներ՝ 12 ՔՀԿ և 3 ՏԻՄ կառույցների համագործակցությամբ: Իրականացված ենթադրամաշնորհային գործողություններում ընդգրկված են եղել 4 մարզերի 6 քաղաքային համայնքների և գյուղական 23 բնակավայրերի 230 ուղղակի և մոտ 200000 անուղղակի շահառուներ (ներառյալ հրապարակումների, հոդվածների, զեկույցների ընթերցողները):

6.8. Համագործակցություն և մասնակցություն

Կազմակերպությունը համագործակցում է տեղական և միջազգային ավելի քան 100 կազմակերպությունների հետ:

Կազմակերպության և՛ տնօրենը, և՛ անձնակազմի անդամներն իրենց իրավապաշտպան գործունեության շրջանակում ներգրավվել են աշխատանքային տարբեր խմբերում.

- Երևանի ամենահին պատմական Կոնդ թաղամասի վերակենդանացման հայեցակարգի մրցույթի ժյուրիի անդամ:
- Երիտասարդական քաղաքականության մասին ՀՀ օրենքի նախագծի մշակման աշխատանքային խմբի անդամ՝ երիտասարդական աշխատողներ ենթախմբի ղեկավար:
- ՀՀ հաշտարարների ինքնակարգավորվող կազմակերպության անդամ, որակավորված հաշտարար:
- Շիրակի մարզի միասնական սոցիալական ծառայության Իրաքից եկած փախստականների իրավունքների պաշտպանության հարցերով աշխատանքային խմբում:
- Շիրակի մարզպետարանի աշխատակազմին կից գործող գենդերային հարցերով զբաղվող հանձնաժողովի անդամ:
- Գեղարքունիքի մարզի միասնական սոցիալական ծառայության Գավառի տարածքային կենտրոնում սոցիալական համագործակցության համակարգող խորհրդի անդամ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Խորհրդի իրավասությունների շրջանակը.

1. քննարկում և որոշումներ է կայացնում Կազմակերպության գործունեությանն առնչվող հարցերի վերաբերյալ՝ բացառությամբ սույն կանոնադրությամբ ժողովին և տնօրենին վերապահված իրավասությունների,

2. ծանոթանում է Կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր փաստաթղթերին և Կազմակերպության կանոնադրությամբ սահմանված կարգով պարտադիր քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնում նրա մարմիններին,

3. պահանջում և ստանում է Կազմակերպության գործունեության վերաբերյալ տեղեկություններ,

4. սահմանում է Կազմակերպության անդամների և կամավորների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև Կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը,

5. իրականացնում է Կազմակերպության կանոնադրությամբ կամ ժողովի որոշմամբ նախատեսված այլ լիազորություններ:

8. ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Կազմակերպության գործընկերները ներկայացվում են ստորև:

Քաղաքացիական հասարակության կառույցներ (ՔՀԿ)

- «Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական կլոր սեղան» բարեգործական հիմնադրամ
- «Դիզակ արտ» ՀԿ
- «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
- «Հայկական կարիտաս» բարեսիրական ՀԿ
- «Բիոսոֆիա» առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության զարգացման կենտրոն (ՀԿ)
- «Գյումրու առաջընթաց» ՀԿ
- «Ասպարեզ» լրագրողական ակումբ
- «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոն ՀԿ
- «Ազատ թռիչք» սոցիալ-տնտեսական զարգացման հիմնադրամ
- «Սարվոր» զբոսաշրջային, սոցիալ-կրթական, բնապահպանական ՀԿ
- «Նռան հատիկ» համայնքային զարգացման հիմնադրամ
- «Ագապե վորլդ» երիտասարդական ՀԿ
- «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ
- «Ուսումնատեղեկատվական» ՀԿ
- «Կանայք հանուն զարգացման» ՀԿ
- «Ալվան ծաղիկ» ՀԿ
- «Շիրակի ուսուցիչների միություն» ՀԿ
- «Կոնտակտ պլյուս» իրավապաշտպան ՀԿ
- «Կայունություն և առաջընթաց» ՀԿ
- «Կանանի հոգեբանական կենտրոն» ՀԿ
- «Հյուսիսի երիտասարդներ» ՀԿ
- «Սարապատ» ՀԿ

- «Սյունյաց նախադպրոցականներ» ՀԿ
- Գորիսի մամուլի ակումբ
- «Երիտասարդների նախաձեռնությունների ակումբ» ՀԿ
- «Արևը Սյունիքից» ՀԿ
- «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ
- «Գործընկերություն և ուսուցում» ՀԿ
- «Մաքուր Գորիս» ՀԿ
- «Գորիսի երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ
- «Թթենի» ՀԿ
- «Հայկական Կարմիր խաչ» ընկերություն
- Իմփաքթ ՀԱԲ Գորիս
- Ջինիշյան Հիշատակի Հիմնադրամ

ՏԻՄ-եր (ՏԻՄ)

- Ամասիայի համայնքապետարան
- Աշոցքի համայնքապետարան
- Գյումրու համայնքապետարան
- Գավառի համայնքապետարան
- Ճամբարակի համայնքապետարան
- Սևանի համայնքապետարան
- Վարդենիսի համայնքապետարան
- Գորիսի համայնքապետարան
- Տաթևի համայնքապետարան
- Տեղի համայնքապետարան
- Մեղրիի համայնքապետարան
- Սիսիանի համայնքապետարան
- Քաջարանի համայնքապետարան

Այլ հաստատություններ

- Շիրակի պետական համալսարան
- Գավառի պետական համալսարան
- Գավառի պետական բժշկական քոլեջ
- Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջ
- Գավառի պետական երաժշտական քոլեջ
- Գորիսի պետական համալսարան
- Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
- Գորիսի պետական քոլեջ

- Շիրակի մարզի փաստաբանական գրասենյակ
- Շիրակի մարզային դատախազություն
- Գյումրու ոստիկանության անչափահասների բաժին
- Շիրակի, Գեղարքունիքի, Սյունիքի մարզի դպրոցներ
- «Սյունյաց երկիր» թերթ
- Գորիսի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախակրթարան
- Գորիսի մանկական գրադարան
- Տարեցների տուն
- Մանկական զարգացման կենտրոններ
- GO կրթօջախ

9. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ (ԴՈՆՈՐ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

2024 թ. իրականացվել է «Մարդու իրավունքների պաշտպանության և քաղաքացիական հասարակության հզորացում ՀՀ մարզերում, փուլ 5» եռամյա ծրագիրը (E-ARM-2021-0172), ինչպես նաև՝ N-ARM-3071 և N-ARM-3120 կարճաժամկետ ծրագրերը։

Սակայն Կազմակերպությունն իր իրավապաշտպան գործունեության ողջ ժամանակաշրջանում իրականացրել է դրամաշնորհայինբազմաթիվ ծրագրեր։ Այստեղ ներկայացվում են այն ֆինանսավորող (դոնոր) կազմակերպությունների ցանկը, որոնց ֆինանսական աջակցությամբ տարբեր թվականներին իրականացվել են տարաբնույթ ծրագրեր.

1. Հայաստանում ԱՄՆ դեսպանատուն,
2. Քաունթերփարթ ինթերնեշնլ,
3. «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն,
4. Եվրասիա համագործակցություն հիմնադրամ,
5. Բաց հասարակության հիմնադրամներ – Հայաստան,
6. Միգրացիայի միջազգային կազմակերպություն,
7. ՄԱԿ-ի ՓԳՀ հայաստանյան գրասենյակ,
8. Ուրբան ինստիտուտ,
9. ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն,
10. Համաշխարհային ուսուցում,
11. Փախստականների հարցերով դանիական խորհուրդ,
12. ԵԱՀԿ երևանյան գրասենյակ,
13. Հանուն ժողովրդավարության ազգային հիմնադրամ,
14. Երևանում Մեծ Բրիտանիայի դեսպանատուն,
15. Համաշխարհային բանկ,
16. Օգնության և զարգացման կաթոլիկ կազմակերպություն,
17. Համագործակցությունը զարգացնելու միջեկեղեցական կազմակերպություն,
18. Հանուն ժողովրդավարության եվրոպական հիմնադրամ,
19. «Հաց՝ աշխարհի համար» (BfdW)։

10. ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

Կազմակերպությունը դրամաշնորհային ծրագրերն իրականացնելիս պարտադիր անցնում է ծրագրի աուդիտ։ 2024 թվականի ընթացքում ևս Կազմակերպությունն անցել է իր հերթական ծրագրի աուդիտը։ Կազմակերպության ծրագրի/ֆինանսական աուդիտն իրականացրել է «Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ-ն, որը գործում է իր ընկերության կանոնադրության, ՀՀ-ի ֆինանսների և

էկոնոմիկայի նախարարության կողմից տրված թիվ ԱԾ 054 աուդիտորական ծառայությունների իրականացման անժամկետ լիցենզիայի հիման վրա: Այդ ընկերությունը ներկայացրել է Աուդիտի եզրակացություն՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

2024 թվականի սեպտեմբերից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում դոնոր Կազմակերպությունն անցել է 2023 թվականի ֆինանսական տարվա ինստիտուցիոնալ աուդիտ, որն իրականացրել է «ԷՅ ԷՅՉ ԷՄ Աուդիտ» ՓԲԸ աուդիտորական ընկերությունը: «ԷՅ ԷՅՉ ԷՄ Աուդիտ» ՓԲԸ հիմնադրվել է 2009 թվականի սեպտեմբերի 1-ին՝ ՀՀ-ի օրենսդրության համաձայն: «ԷՅ ԷՅՉ ԷՄ Աուդիտ» ՓԲԸ-ի հիմնական գրանցման գրառման համարն է (ՀԳԳՀ) 1 20 0220: 2013 թվականի նոյեմբերից «ԷՅ ԷՅՉ ԷՄ Աուդիտը» ՓԲԸ HLB International-ի անդամ է, որն անկախ աուդիտորական ընկերությունների և բիզնես խորհրդատուների համաշխարհային ցանց է:

11. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

1. Մերի Խաչատրյան, տնօրեն

2. Սեյրան Մարտիրոսյան, Շիրակի մասնաճյուղի ղեկավար, ծրագրերի համակարգող

3. Ռուզաննա Ավագյան, տնօրենի օգնական

4. Անի Մովսեսյան, հաշվապահ

5. Օֆելյա Գալստյան, թարգմանիչ



6. Լուսինե Թոփլաղալցյան, Գեղարքունիքի մասնաճյուղի ղեկավար

7. Նանե Մնացականյան, Սյունիքի մասնաճյուղի ղեկավար



8. Արմեն Պետրոսյան, Շիրակի մասնաճյուղի ղեկավարի օգնական

9. Ռուբեն Խաչիկյան, Գեղարքունիքի մասնաճյուղի ղեկավարի օգնական

10. Սոնա Ալավերդյան, Սյունիքի մասնաճյուղի ղեկավարի օգնական

11. Նաիրա Ավետիսյան,
իրավաբան,
Երևան

12. Վիկտորիա Եղոյան,
իրավաբան,
Շիրակի մասնաճյուղ

13. Ագապի Մանուկյան,
իրավաբան,
Շիրակի մասնաճյուղ

14. Մանուշ Նալբանդյան,
իրավաբան,
Գեղարքունիքի մասնաճյուղ

15. Լիլիթ Հայրապետյան,
իրավաբան
Սյունիքի մասնաճյուղ

16. Լուիզա Զաքեյան,
ասիստենտ,
Շիրակի մասնաճյուղ

12. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
2. ԱՀ – Արցախի Հանրապետություն
3. ՀԿ - Հասարակական կազմակերպություն
4. ՔՀԿ - Քաղաքացիական հասարակության կառույց
5. ՔՀԴ - Քաղաքացիական հասարակության դպրոց
6. ՀՎԿ - Հետազոտական-վերլուծական կենտրոն
7. ԱԺ - Ազգային ժողով
8. ՏԻՄ - Տեղական ինքնակառավարման մարմին
9. ԱՄՆ - Ամերիկայի Միացյալ Նահանգներ
10. ՄԱԿ - Միավորված ազգերի կազմակերպություն
11. ՓԳՀ - Փախստականների հարցերով գերագույն հանձնակատար
12. ԵԱՀԿ - Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
13. ՄՄԾ -Միասնական սոցիալական ծառայություն

«Ա.Դ. Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» հասարակական կազմակերպությունն իր երախտագիտությունն է հայտնում ներկայիս դոնորին՝ «Հաց աշխարհի համար» (Bread for the World) գերմանական կազմակերպությանը, ինչպես նաև նախորդ բոլոր դոնոր կազմակերպություններին, որոնք հնարավորություն են ընձեռել Կազմակերպությանն իրականացնելու իր գործունեությունը՝ պաշտպանելով մարդու իրավունքները Հայաստանի Հանրապետությունում երեք տասնամյակից ավելի: